

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

* * * Վիննայի Մխիթարեանների բերան «Ամսօրեայ Հանգիսի» մէջ շատ հետաքրքրական և ամենայն ուշադրութեան արժանի մի յօդուած կայ Հունգարիայի հայ կաթողիկ համայնքի մասին: Յօդուածագիրը շատ զգոյշ և ակնարկներով է միայն խօսում, այնպէս որ հեռաւոր հայերս հազիւ թէ կարողանում ենք ըմբռնել արծարծուած խնդրի գլխաւոր իմաստը: Բանից դուրս է դալիս՝ որ Հունգարիայի հայերը արդէն 168 ամի է, որ զրկուած են իրենց սեպհական՝ հայ եպիսկոպոս ունենալուց: Սակայն ինչպէս երևում է՝ ազգային զգացումները դեռ իսպառ մտրած չեն այդ համայնքում և նորից փորձեր են լինում սեպհական եպիսկոպոս և կրօնական վարչութիւն ունենալու: Կաթողիկութեան դէմ հայ ազգի տածած ոչ-բարեացակամ — մեղմ խօսած լինելու համար — զգացումները բղխում են ոչ այնքան դաւանաբանական տարբերութիւններից, որչափ այն ակներև իրողութիւնից, որ կաթողիկութիւնը խորթացնում է և օտարացնում այդ դաւանութիւնն ընդունող հայերին հայ ազգից, հայ լեզուից և հայ զգացումներից: Տամկաստանի հայկաթողիկը իւր մայրենի լեզուն է դարձրել թուրքերէնը, Ֆրանսերէնը և խորշում է հայութիւնից. Արաստանի կաթողիկ հայը ձգտում է ցոյց տալ իրեն վրացի կամ «հռովմական կաթողիկ» խուսափելով հայ անունից. Հունգարիայի հայ կաթողիկը արդէն մաճառ է. Գալիցիայի հայ կաթողիկը — լեհացի և չն. և չն.: Մինչդեռ արդարը խօսելու համար պէտք է խոստովանի, որ ազգութիւնից խորթացնելը կաթողիկութեան անհրաժեշտ և անրաժանելի յտկութիւններից չէ: Ինչո՞ւ լեհացին, իրլանդացին, Ֆրանսացին կաթողիկ կարող են լինել, մնալով միանգամայն լաւ լեհացի, լաւ ֆրանսացի: Ազգութիւնից խորթացնելը կաթողիկութեան համար եղել է մի վատ գէնք, մի ստոր քաղաքականութիւն, որ թէև ժա-

մանակին տուել է որոշ արդիւնք, բայց արդէն հնացած է և արդէն մեծապէս փնասում է նոյն իսկ կաթոլիկութեան լաւ հասկացուած շահերին: Ով որ լաւ հետեւել է և ըմբռնել ընդհանուր հայութեան բոլորովին տարբեր վերաբերմունքը դէպի բողոքականութիւնը և դէպի կաթոլիկութիւնը՝ կհասկանայ իմ ասածը: Միմիայն Մխիթարեան միաբանութիւնն է եղել, որ սկզբից ի վեր կանգնել է ուղիղ ճանապարհի վրայ և իմացել է «Այսերը կայսեր տալ և Աստրծունը Աստծու», ամեն կերպ ջանք գործ դնելով հաշտեցնել կաթոլիկութեան և հայութեան շահերը: Հռովմի այժմեան գահակալող հայրապետը՝ Լեոն պապը նոյնպէս հեռու չէ եղել կաթոլիկ զանազան ազգութեանց շահերը լաւ ըմբռնելուց և իւրաքանչիւրի շահը ռոտնձգութիւններէ պաշտպանելուց: Այժմեան, այսպէս անուանուած «ազգային» դարում, երբ ամեն տեղ, ամեն երկրում, ամեն մի ցեղի մէջ ազգային գիտակցութիւնը չափազանց զարգացած է և դիւրազգած՝ հազիւ թէ կաթոլիկութեան շահերին—լաւ հասկացուած շահերին—նպաստաւոր լինի այս կամ այն տեղի կաթոլիկ հայերի համայնական շահերը դոհել յօգուտ հունգարացիների, լեհերի կամ ուրիշ մանր ու խոշոր ազգութեանց նեղսիրտ և ագահ ասորժակներին: Մեր բոլոր համակրանքը Մխիթարեանների պաշտպանած արդար դատի կողմն է: «Հանդիսի» յօգուածը հետեւեալն է.

Գ Ի Ը Ն Ս Ի Լ ՈՒ Ը Ն Ի Ո Յ Ը Ջ Գ Ը Ն Ո Յ Փ Ը Փ Ը Ք Ը

Հիմակ, որ Հունգարիոյ մէջ, տէրութեան աւագաժողովը բացուեցաւ «Հայ ծեսին հունգարական առաքելութիւնը» տիտղոսով՝ Veridicus (Ճշմարտախօս) կեղծ անունի տակ պահոււթած գրչէն տետրակ մը հրատարակուեցաւ—անտարակոյս ան դիտմամբ, որ նոր բացուած պատգամաւորաց ժողովին անգամներուն մտադրութիւնն այս խնդրին վրայ ուղղէ:— Տետրակը՝ շատ խորունկ մտնելով, կը խօսի հայ ծիսին ազգայնութեան կոչմանը վրայ—և հետևութիւնն առ այն կը յանգի, որ հայ եպիսկոպոսութիւնը՝ նորէն կանգնուի Գրանսիլուանիոյ մէջ: —

Ժամանակէ ժամանակ ձայներ ելան, որոնք հայ ազգին աս փափաքը կը յայտնէին: Աս բանս երկու դարէ ի վեր

կը տեւէ: — Աս յամառ տոկունութիւնը, աս՝ նպատակին հասնելու պինդ հետևողութիւնը (conséquence), աս՝ երբեք չյոգնելու և միշտ նորոգուող ջանքը, պէտք է, որ ստուգիւ պատճառ տայ մտածելու անոնց, որոնք կոչուած են աս խնդրին վրայ որոշումն ընելու — նկատմամբ, Հայոց՝ երկուհարիւր տարիէ ի վեր, գիտաւոր աստղի մը պէս երեւան ելլող փափաքին իրականութեանը մէկտեղ գործակից ըլլալու: — Հարիւրութսունուհինգ տարիէ ի վեր կը լսուի աս տենչանքը: Աւստի, չէ՛ թէ սերնդի մը դադափարը՝ ցանկութիւնն է հայ եպիսկոպոսութեան վերականգնումը, հապա սերունդներու: — որ շարունակեալ մերժմանց, բազմապատիկ ընդդիմութեանց հակառակ ալ, չմարեցաւ մէկ կամ մէկալ սերնդեան հողուոյն մէջ — հապա նորոգեցաւ, դալարացաւ: — Մերժմանէն, ընդդիմութեանէն ու հակառակութեանէն իբրև թէ նոր սնունդ առաւ — ինչպէս որ ծառն կը կանանչնայ՝ երբ դարնանային կեանք տուող շունչն իրեն կը դպչի: — Ասկէ ան կը հետևի թէ պէտք է որ, այս փափաքն, այս տենչանքն արդարութեան, ճշմարտութեան վրայ հիմնուած ըլլայ:

Եթէ արդարութիւն է աղգայնոց ուզածն, ան ատեն իրաւունք ալ ունին: Արդ՛հետև իրաւունք ունեցող տէրութեան մը մէջ, արդարութիւնը՝ կ'ենթադրէ իրաւունքը: — Հայերը չեն խնդրեր արտօնութիւն իրենց համար, և ոչ ալ արդարաւորութիւն. հապա միայն ետ կը խնդրեն դայն, ինչ որ արդէն ունէին:

Գուցէ սխալ մըն էր իրենց կողմանէ, որ 1715 ին մեռած Աւքսէնտիոս Արզարեան եպիսկոպոսէն ետև չկրցան կիւրկէնի մէջ միաբանիլ. ուր ժողոված էին եպիսկոպոս մ'ընտրելու — և այսպէս Վարդոս Զ. առժամանակեայ կերպով, կամ մինչև որ եպիսկոպոսին անձին նկատմամբ միաբանին՝ Գրանսիլուանիոյ լատինածէս եպիսկոպոսին իրաւասութեանը տակ դրաւ զիրենք:

Վարելի է, սխալ մըն էր իրենց կողմանէ ան ալ, որ ետքէն՝ եպիսկոպոս ընտրելու իրաւունքին ետևէն չինկան աւելի ազգու կերպով Սրբազան Պապին աթոռին առջև — հապա ընդունեցան անտէրնչութիւնը (interregnum): Բայց ասով ունեցած իրաւունքներէն երբեք չհրաժարեցան:

Միջոցի մը մէջ, տէրութիւնն — ինչպէս կ'ըսուի — ուղեց կատարել Հայոց իրաւացի խնդիրքը: Ազատութեան պատերազմին յաջորդ պահեսան ժամանակամիջոցին էր աս բանս երբ Խաչիկ Լուքաչիկ, այն ատենի կերլայ Հայա-

քաղքի ժողովրդապետին ուղեցին տալ եպիսկոպոսական թագը: Բայց ինչ գնով, ինչ պայմանաւ: Անձ՛ որ բացարձակ իշխանութիւնն ընդունի: — Ահա՛ հոս էր առիթն, որ Հայոց փափաքը մարմին զգենու: Ի վերայ այսք ամենայնի մն պատահեցաւ, որ Հայերը՝ եպիսկոպոսութեան վերականգնումը չընդունեցան. — վասն զի զինը՝ որ անոր համար ուզուեցաւ՝ ընդունուելի չհամարեցան: Հայերն՝ իրենք զիրենք պիտի ուրանային: Պիտի ուրանային ազատութեան պատերազմին մէջ՝ Հունգարացոց համար ինկած դաւկըններուն թափած արեան սրբութիւնը. — պիտի ուրանային՝ իրենց ըստը անցեալը — պիտի ուրանային՝ հունգարական ազգին հետ ունեցած եղբայրակցութիւնը՝ եթէ բացարձակ իշխանութեան առաջարկութիւններն ընդունած ըլլային: — Որ ազգն որ ասանկ ցորաւոր անձնուրացութիւն կը ցուցնէ, անոր վրայ չի կրնար անցանք դրուել, սր մասնական ազգայնութեան միտութիւններ ունի. — և թէ՛ միայն առթին կը սպասէ, որ աս փափաքին կենդանութիւն տայ:

Սահմանադրական ժամանակին վարչութիւնն՝ իրօք ճանչցաւ ազգայնոց՝ տէրութեան ունեցած միտութիւնն ու լաւազգածութիւնն, որովհետև 1868 ին, ԽԳ. յօդուածին ձեռօք մէկալ ինքնակաց հունգարական եկեղեցիները՝ տէրութեան կրօն ճանչցած ատենը, ինկնակաց հայ կաթողիկէ եկեղեցին ալ օրինաց յօդուածին մէջ առաւ: Ուստի Հայոց արուեստը իրաւունք, որ ինքնակաց վերին կառավարութեան ներքև միանան ու պահեն անխախտ իրենց եկեղեցական իրաւունքներն ու անկախութիւնը:

Զի կրնար իրենց զլացուել եպիսկոպոսութեան վերանորոգութիւնը՝ հունգարական տեսակէտէն ալ: Որովհետև և ոչ մտքէ անցնելու բան է, որ այս արեւելեան ազգին մէկ պղտիկ բեկորը, որուն ազգասիրութիւնն և հունգարական ազգին ունեցած սէրը՝ 168 տարիէ ի վեր՝ առանց եպիսկոպոսի ալ չվրդովեցաւ ու չնուաղեցաւ. — հայածէս եպիսկոպոսութեան վերականգնումը, կարենայ դատել հունգարական ընկերակցութենէն:

Ազգայնութեան և ծէսի դադափաբը՝ մէկ չէ. — բայց երկուքն ալ կրնայ կենալ, մէկը մէկալին քով: Հայութիւնը՝ դեռ այսօր ալ բարեպաշտութեամբ կը խնամէ, կը դարմանէ իր արարողութեանց աւանդութիւնը. — իրեն նախնիներէն ժառանգած ծիսական արարողութիւնները, բայց շատոնց միացած է հունգարական ազգին հետ: — Արարողութիւնը կը նշանակէ, միայն մէկ ճշմարիտ Աստուծոյն, ինչ-

պիսի կերպով հղած երկրպագութիւնը. և ամենեին աղքե-
ցութիւն չունի ազգասիրութեան վրայ:

Աս՝ երկայն ժամանակէ ի վեր յերկունս եղած խըն-
դիրը—աս՝ օրէնքով ապահովցուած հասարակաց իրաւունքը
— աս՝ հասարակութեան հիման վրայ գրուած փափաքը՝
իր նպաստաւոր լուծումը կը սպասէ: արդարութեան նշա-
նին մէջ ծնած տէրութեան աւագածողովէն:

* * * Տեղեկանում ենք նոյն «Հանդէսից» (նոյեմբ. 1901),
որ Գալիցիայի հայ կաթողիկ համայնքի Իսահակեան արքե-
պիսկոպոսին յաջորդել է Յովսէփ Թէոդորոսեան արքեպիս-
կոպոսը, որի աթոռանիսան է Լէոպոլիս, այն է՝ Լեմբերգ
քաղաքը: Իսահակեան արքեպիսկոպոսի մահուան պատճառի
մասին ոչ անկարեւոր տեղեկութիւններ է հաղորդում Ամե-
րիկայի Բոստոն քաղաքում նոր լոյս տեսնող «Կոչնակ» շա-
բաթաթերթը (1901, թիւ 48): «Կոչնակի» հաղորդածը
ընդօրինակում ենք անփոփոխ.

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԼԵՄԳԵՐԿ

Լեմպէրի, Կալիցիոյ մայրաքաղաքը, միակ քաղաքը
աշխարհի մէջ, որ երեք արքեպիսկոպոսներ ունի, Հռո-
մէական-Կաթողիկ, Յոյն և Հայ, վերջերս սկանաւոր եզաւ
հետաքրքրական եղեռնական դատի մը: Ամբաստանեալ անձն
էր Մարտիրոսովիչ կոչուած մէկը, Լեմպէրիի Հայկական
Մայր Եկեղեցիին պաշտօնեաներէն մին, որ ամբաստանուած
էր իւրացուցած ըլլալ 300,000 Բրոնէն, դումար մը որ իր
պահպանման ներքե կը գտնուէր:

Լեմպէրիի Հայկական Մայր Եկեղեցին Աւստրիոյ մէջ
ամենէն հաւուստ կրօնական հաստատութիւններէն մին է
և անոր արքեպիսկոպոսները, շատ մը տարիներէ ասդին
ազգաանեբու համար փոխատուութեան հաստատութիւն մը
պահպանած են, տեսակ մը ողորմասիրական գործ Փրան-
սական Մօն Տը Բիէթէի հիման վրայ հաստատուած: Այս
հաստատութեան անօրէնն էր Կանոնիկոս Մարտիրոսովիչ,
մեծապէս յարգուած ու սիրուած Քահանայ մը որ նոյն իսկ
Արքեպիսկոպոսական ընտրելի ըլլալու հաւանականութիւնը
կ'ընծայէր: Քանի մը ամիս առաջ խոստովանեցաւ արգա-
բութեան ատեանի մը առջև թէ ծանր զեղծումներ գոր-
ծած էր: Այն ատեն սոուզուեցաւ թէ մեծաքանակ շահա-

գիտական գործեր ըրած էր քարիւղի արժէթուղթերու վըրայ և իր խնամքին յանձնուած գումարները անխորհրդաբար ու անխղճօրէն գործածած էր իր անձնական շահագիտական հաշիւները մաքրելու: Նոյնպէս դրամ փոխ տուած էր բարեկամներու գրաւի գրութեամբ: Բայց այնպիսի անարժէք առարկաներու վըրայ որոնք ընաւ չ'էին համապատասխաներ իրենց արուած գումարներուն: Այդ դրամներն ալ պարզապէս կորսուած էին հաստատութեան համար: Բաց աստի աս քահանան արտակարգ շքեղութեամբ ապրած էր:

Դատաւարութեան լրումին, աս յանցապարտ քահանան ութն ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ, բայց արքեպիսկոպոսը ինքը՝ Իվանովիչ (Բսակովիչ), իր զգացած դառն մորմոքումին և յուսախաբութեան հետեւանքով հիւանդացաւ և Մարտիրոսովիչի խոստովանութեանէն մի քանի օր վերջը մեռաւ:

Շատ զարմանալի չէ, որ Կանոնիկոս Մարտիրոսովիչ «իր խնամքին յանձնուած գումարները անխորհրդաբար ու անխղճօրէն գործածած էր իր անձնական շահագիտական հաշիւները մաքրելու»: Ամեն տեղ, լինի այդ հիւսիսում թէ հարաւում, ուր գումարներ են յանձնուում այս կամ այն թէկուզ շատ յարգուած՝ անձնաւորութեանց «խնամքին», առանց կոնտրոլի, առանց հաշուետեսութեան, կստացուին ուշ թէ շուտ նոյն փութը հետեւանքները: Թէ փողերը կը կորչին, թէ մարդիկ կարատաւորուին: Ինչպէս կարելի է որ մի հասարակական հիմնարկութեան գլուխ կանգնած մարդ, ինքնազուլս, առանց իւր իշխանութիւնից թոյլաւութիւն ունենալու «արժէթուղթեր» առնէ և ծախէ — լինի այդ քարիւղի արժէթուղթ թէ քարածուխի — և մեծաքանակ կամ փոքրաքանակ շահագիտական գործեր կատարէ: Ամեն մի հաստատութեան մէջ, ուր թոյլ կտրուի այդպիսի «ընտանեկան ձևով անտեսութիւն», վաղ կամ անագան կստացուին այնպիսի անհաճոյ անակնկալներ, որպիսին տեղի է ունեցել Ղեմբերգում:

